ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 2-32-40
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2024թ.

«ՈՒՂՂԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ՀԿ-ի ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Գ.ՔՈԹԱՆՋՅԱՆԻՆ
directdemocracy.ngo@gmail.com

Հարգելի՛ պարոն Քոթանջյան,

Ձեր 15.03.2024թ. թիվ 1081019 հարցմանը.

Հայտնում եմ, որ Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 2024թ. փետրվարի 27-ի թիվ 549 որոշմամբ ս/թ. մարտի 28-ին հայտարարվել է ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթներ:

ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանով սահմանված կարգի 12-րդ կետի համաձայն մրցույթի հայտարարությունը տեղադրվում է http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Մրցույթների հայտարարությունների հրապարակայնությունը ապահովելու նպատակով վերջիներս տեղադրվում են նաև Լոռու մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայք էջում, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայք էջում, ինչպես նաև համայնքապետարանի պաշտոնական կայք էջում:

ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանով սահմանված կարգի 13-րդ կետի «դ» ենթակետի՝ փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը պետք է լինի տվյալ մրցույթի անցկացման օրվան նախորդող 15-րդ օրը: Եթե փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետի օրը համընկնում է ոչ աշխատանքային

կատ. Լ.Քոչարյան
հեռ. /0322/ 4-09-27

օրվան, ապա վերջնաժամկետի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը: Վանաձորի համայնքապետարանի պաշտոնական կայք էջում՝ Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու մրցույթի հայտարարություններ բաժնում՝ վերջնաժամկետի մասում նշված 28.03.2024թ. կայքում մրցույթի հայտարարության ակտիվ լինելու ժամկետն է: Մրցույթի փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը հայտարարության մեջ սահմանված է եղել մարտի 13-ը, որը համապատասխանում է նշված հրամանի պահանջին: Մրցույթի հայտարարությունը տեղադրված է եղել http://www.azdarar.am հասցեում, Լոռու մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայք էջում և տարածքային կառավարման և ենթակուցվածքների նախարարության պաշտոնական կայք էջում, որտեղ փաստաթղթերի ներկայացման որպես վերջնաժամկետ սահմանված է մարտի 13-ը: Վանաձորի համայնքապետարանին զգուշացվել է, որ Վանաձորի համայնքապետարանի պաշտոնական կայք էջի հայտարարություններ բաժնում վերջնաժամկետի մասում տեղադրել հայտարարությամբ սահմանված դիմումների վերջնաժամկետի օրը, այլ ոչ թե մրցույթի հայտարարության գործողության ժամկետը:

Այն հարցին, որ Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմը արհեստական խոչընդոտներ է ստեղծում մրցույթների համար դիմած քաղաքացիների համար, եթե Ձեզ դիմում են նման հարցերով, ապա անհրաժեշտ է քաղաքացիներին ուղղորդել Լոռու մարզպետի աշխատակազմ՝ հարցը տեղում ուսումնասիրելու և կարգավորելու նպատակով:

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2.2 մասով և 2006թ. օգոստոսի 29-ի Տարածքային կառավարման նախարարություն համակարգող նախարարի «Համայնքային ծառայության մրցութային եվ ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը հաստատելու» N 12-Ն հրամանի՝ 15000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքի համայնքապետարանի հանձնաժողովի կազմում ընդգրկվում է համապատասխան մարզպետարանից 2 ներկայացուցիչ: Լոռու մարզպետի աշխատակազմի կողմից Վանաձորի համայնքապետարան ներկայացված է մարզպետարանի ներկայացուցիչների ցուցակը:

Ինչ վերաբերվում է մրցութային հանձնաժողովների կազմում ժամկետային աշխատանքային պայմանագրով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնողների ընդգրկվելուն, ապա «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով հստակ սահմանափակումներ չկան նշված ժամկետային աշխատանքային պայմանագրով

կատ. Լ.Քոչարյան
հեռ. /0322/ 4-09-27

համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնողի և մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված համայնքային ծառայողների միջև՝ բացառությամբ վերապատրաստումը և ատեստավորումը: Ժամկետային աշխատանքային պայմանագրով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնողների նկատմամբ համայնքային ծառայության օրենսդրությամբ նկարագրված չեն հանձնաժողովի անդամ լինելու սահմանափակումները:

Իմ կողմից այս խնդրի վերաբերյալ գրություն է ուղարկվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին: Կից ներկայացնում եմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության դիրքորոշումը հարցի վերաբերյալ :

Ամփոփելով վերոգրյալը հայտնում եմ, որ Լոռու մարզպետի 2 ներկայացուցիչները Տարածքային կառավարման նախարարություն համակարգող նախարարի 29.08.2006թ. N 12-Ն հրամանով սահմանված կարգի 8.1 կետի 2) –րդ ենթակետի համաձայն ընդգրկվելու են մրցութային հանձնաժողովի կազմում: Ներկայացված մրցույթների գործընթացը իրավաչափ է, իսկ քաղաքացիների փատաթղթերի չընդունման փաստեր Լոռու մարզպետի աշխատակազմում չլինելու պատճառով չենք կարող գնահատական տալ իրավաչափության մասին: Մրցութային հանձնաժողովի ստեղծման գործընթացը իրավաչափ է:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

22/03/2024

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Հարգանքով՝ Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

կատ. Լ.Քոչարյան
հեռ. /0322/ 4-09-27

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

**№ ԳՍ/15.4/5423-2024**

ՀՀ Լոռու մարզպետ
Ա. Ղազարյանին

*Ի պատասխան Ձեր 08.02.2024թ.*
*թիվ 01/107.4.1/01130-2024 գրության*

Հարգելի՛ պարոն Ղազարյան

Ձեր հարցման վերաբերյալ հայտնում ենք՝

«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2.2 մասով և 2006թ. օգոստոսի 29-ի Տարածքային կառավարման նախարարություն համակարգող նախարարի «Համայնքային ծառայության մրցութային եվ ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը հաստատելու» N 12-Ն հրամանով սահմանվել է.

15000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքի համայնքապետարանի հանձնաժողովի կազմը ընտրվում է.

ա. երկուսը՝ համապատասխան մարզպետարանի ներկայացուցիչներ.

բ. երկուսը՝ համապատասխան համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչներ (համայնքի ղեկավար, տեղակալ, խորհրդական, աշխատակազմի համայնքային ծառայողներ).

գ. մեկը՝ համայնքի ավագանու անդամ.

դ. մեկը՝ գիտական և ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագիտություն ունեցող ներկայացուցիչ:

Ելնելով վերոգրյալից՝ ժամկետային աշխատանքային պայմանագրով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնողների նկատմամբ համայնքային ծառայության օրենսդրությամբ նկարագրված չեն հանձնաժողովի անդամ լինել սահմանափակումները:

Հավելեմ նաև՝ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով հստակ սահմանափակումներ չկան նշված ժամկետային աշխատանքային պայմանագրով համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնողի և մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված համայնքային ծառայողների միջև՝ բացառությամբ վերապատրաստումը և ատեստավորումը:

Invalid signature

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 Գ. Սանոսյան

Կատարող՝ Համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ, Ե. Վարդանյան
Հեռ. 010515133